

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱԲԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

**ИНОСТРАННЫЕ ЯЗЫКИ В ВЫСШЕЙ ШКОЛЕ
FOREIGN LANGUAGES IN HIGHER EDUCATION**

Գիտական հանդես
Научный журнал
Scientific Journal



2 (19)

Երևան – 2015

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Вестник издается по решению Ученого совета ЕГУ
The Bulletin is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ ր.գ.դ., պրոֆ. Երզնկյան Ե.Լ.

Խմբագրական խորհուրդ.

ր.գ.դ., պրոֆ. Գասպարյան Ս.Բ., ր.գ.դ., պրոֆ. Գաբրիելյան Յու.Ս., ր.գ.դ., պրոֆ. Մակարյան Ա.Ա., ր.գ.դ., պրոֆ. Պարոնյան Շ.Հ., ր.գ.դ., դոց. Միմոնյան Ա.Ա., ր.գ.դ., դոց. Առաքելյան Ա.Հ., ր.գ.թ., դոց. Բաղդասարյան Հ.Գ., մ.գ.թ., դոց. Կարապետյան Կ.Ս., մ.գ.թ., դոց. Հարությունյան Ջ.Հ., դոց. Թովմասյան Ն.Ս. (պատասխանատու քարտուղար):

Главный редактор: д.ф.н., проф. Ерзинкян Е.Л.

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Гаспарян С.К., д.ф.н., проф. Габриелян Ю.М., д.ф.н., проф. Макарян А.А., д.ф.н., проф. Паронян Ш.А., д.ф.н., доц. Симонян А.А., д.ф.н., доц. Аракелян А.Г., к.ф.н., доц. Багдасарян А.Г., к.п.н., доц. Карапетян К.М., к.п.н., доц. Арутюнян З.Г., доц. Товмасын Н.М. (ответ. секретарь).

Editor-in-chief: Doctor in Philology, Prof. Yerznkyan Y.L.

Editorial Board:

Doctor in Philology, Prof. Gasparyan S.K., Doctor in Philology, Prof. Gabrielyan Y.M., Doctor in Philology, Prof. Makaryan A.A., Doctor in Philology, Prof. Paronyan Sh.H., Doctor in Philology, Associate Prof. Simonyan A.A., Doctor in Philology, Associate Prof. Arakelyan A.H., PhD, Associate Prof. Baghdasaryan H.G., PhD, Associate Prof. Karapetyan K.M., PhD, Associate Prof. Harutyunyan Z.H., Associate Prof. Tovmasyan N.M. (Executive Secretary).

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հաղեսն ընդգրկված է ատենախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի ամսագրերի ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի ցանկում:

Научный журнал «Иностранные языки в высшей школе» включен в список периодических изданий, допущенных Высшей аттестационной комиссией РА для публикации результатов диссертационных работ.

Scientific journal "Foreign Languages in Higher Education" is included in the list of journals approved by RA Supreme Certifying Commission to publish the main findings of dissertations.

**ՏԱԲՈՒ ԲԱՈՒԵՐԸ ՈՐՊԵՍ ՀՈՒՉԱՍՏԱՍԿԱԿԱՆ ԲԱՈՒԵՐԻ
ԱՌԱՋԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ-ԴԱՇՏ**

Սույն հոդվածում քննվում են ուժգնացնող բառերի առաջացման աղբյուր դաշտերից մեկի՝ տաբու բառերի իմաստային ու գործարանական առանձնահատկությունները քերականացման լույսի ներքո: Գնահատողական ասույթներում արտահայտված դատողությունները շեշտելու համար խոստովն աշխատում է գործածել հնարավորինս արտահայտիչ ու վառ գունավորում ունեցող ուժգնացնող բառեր: Տաբու բառերը պատկանում են ուժգնացնող բառերի հենց այս խմբին՝ բնութագրվելով արտահայտչականությամբ ու հուզականությամբ, ինչը պայմանավորված է նրանով, որ տաբու բառերի իմաստային կառուցվածքում դեռևս պահպանվում են իրենց հիմնական իմաստի որոշ բաղադրիչներ:

Բանալի բառեր. գնահատողականություն, հուզագնահատողական ընկալում, ուժգնացում, աղբյուր-դաշտեր, տաբու բառեր, քերականացում, հուզասաստկական բառեր

Ուժգնացման կարգը, անմիջականորեն կապված լինելով մարդու ճանաչողական ու հուզագնահատողական ընկալման հետ, բազմիցս դիտարկվել է լեզվի փիլիսոփայության, տրամաբանական իմաստաբանության ու գործարանական լեզվաբանության դիրքերից: Այս առումով հետաքրքիր է հատկապես ուժգնացման կարգի ուսումնասիրությունը գնահատողականության համատեքստում, քանի որ, ինչպես գիտենք, որպես լեզվական անհատ մարդը գնահատողականության միջոցով ներկայացնում է իր սեփական ճանաչողական տարածությունը՝ իր գիտելիքների, արժեքների, պատկերացումների, զգացումների, հույզերի ամբողջության միջոցով:

Ուժգնացումը գնահատողականության քանակական բնութագիրն է: Ուժգնացումը մուտք է գործում գնահատողական ասույթ, սաստկացնում կամ ապաստակացնում արտահայտված գնահատողական վերաբերմունքը, ավելացնում նրա արտահայտչականությունն ու հուզականությունը: Նրա հիմքում ընկած է ուժգնացման սանդղակի գաղափարը, որը ցույց է տալիս հատկանիշի ուժգնացում թե՛ դեպի վեր, թե՛ դեպի վար:

Ուժգնացնող բառերի ուսումնասիրությունը նրանց առաջացման ու զարգացման տեսանկյունից մեզ հանգեցնում է այն եզրակացությանը, որ կարելի է առանձնացնել մի քանի խոշոր աղբյուր-դաշտեր, որոնցից սկիզբ են առել ուժգնացնող բառերը: Այս իմաստային դաշտերը լեզվում դեռ կարող են գործածվել իրենց նախնական բառային իմաստներով, բայց շատ դեպքերում համագոյակցում են իրենց նոր, ավելի քերականացված իմաստների հետ: Ինչպես նշում է Ֆ. Լիխտենբերգը. «Չնայած ճիշտ է, որ ժամանակի

ընթացքում մի կառույցը կարող է փոխարինվել մյուսով, սակայն ճիշտ է նաև այն, որ ավելի հաճախ հին և նոր իմաստները համագոյակցում են բավականին երկար ժամանակ» /Lichtenberk, 1991: 37/:

Սույն հոդվածը ներկայացնում է ուժգնացնող բառերի թերևս ամենահետաքրքիր և արագ փոփոխվող աղբյուր-դաշտերից մեկը՝ տաբու բառերը: Գնահատողական ասույթներում արտահայտված դատողությունները շեշտելու ու խոսակցի մոտ հետաքրքրություն առաջացնելու համար խոսողն աշխատում է գործածել հնարավորինս արտահայտիչ ու վառ գունավորում ունեցող ուժգնացնող բառեր: Տաբու բառերը կամ գոեհկաբանությունները պատկանում են ուժգնացնող բառերի հենց այս խմբին՝ բնութագրվելով արտահայտչականությամբ ու հուզականությամբ, ինչը պայմանավորված է նրանով, որ նրանք չեն կորցրել իրենց հիմնական իմաստն ու իրենց իմաստային կառուցվածքում դեռևս հիմնական իմաստից որոշ բաղադրիչներ են պահպանում: Այդ իսկ պատճառով նրանք դասվում են հուզասաստական բառերի խմբին:

Տաբու բառերը՝ որպես ուժգնացնող բառեր, առավել հաճախ գործածվում են ոչ պաշտոնական խոսքում: Բիբերը և մյուսները նշում են, որ խոսակցական լեզուն ու գիտական խոսույթը նախընտրում են աստիճանավորման տարբեր միջոցների գործածություն: Խոսակցական լեզվում առավել հաճախ են գործածվում հետևյալ աստական բառերը՝ *bloody, damn, totally, absolutely* և այլն /Biber et al., 2007: 211/: Մինչդեռ ակադեմիական տեքստերում առավել պաշտոնական միավորներ են գործածվում՝ *entirely, extremely, fully, highly & strongly* /Biber et al, 2000: 565/:

Ժամանակակից անգլերենում որպես հուզասաստական բառեր գործածվող տաբու բառերը դեռևս չեն համարվում լիովին զրկված իրենց բուն բառարանային իմաստից և հետևաբար չեն կարող համարվել չեզոք: Այդ իսկ պատճառով հետաքրքիր է ուսումնասիրել այս բառերի ծագումն ու զարգացումը լեզվում ու խոսքում: Այս բառերը, ի տարբերություն այլ ուժգնացնող բառերի, ոչ միայն աստիճանաբար ձեռք են բերում ուժգնացնող նշանակություն, այլ նաև ունեն վառ արտահայտված գործաբանական գործառույթ՝ քերականացման գործընթացի շնորհիվ: Այլ ուժգնացնող բառերը ևս ձեռք են բերում գործաբանական իմաստ և ծառայում են որպես խոսողի դիրքորոշման արտահայտման միջոց /Athanasiadou, 2007: 555/, սակայն տաբու բառերից զարգացած հուզասաստական բառերը արտահայտում են խոսողի հուզագնահատողական վերաբերմունքը, և նրանց իմաստային կառուցվածքում հուզական բաղադրիչը շատ ավելի վառ է արտահայտված /Murphy, 2010: 128/: Օրինակ՝ հետևյալ ասույթներում խոսողը նախընտրում է գործածել *bloody* բառը առավել չեզոք, սակայն ուժգնացման սանդղակում գրեթե նույն դիրքը գրավող *very* կամ *completely* բառերի փոխարեն:

“**Bloody** idiot,” said Will, snickering at the double meaning. (COCA)

Stupid, **bloody fool**. He had to do something to turn the tide. (COCA)

Այս ասույթներում *bloody* բառը պարզապես չի նշում, որ խոսողը ինչ-որ մեկին համարում է շատ հիմար, այլ արտահայտում է խոսողի զայրույթն ու

հիասթափությունը: Միևնույն ժամանակ հարկ է նաև նշել, որ չնայած *bloody* բառը դեռևս ունի հստակ արտահայտված վառ հուզագնահատողական երանգավորում, այն ունի կապակցելիության ավելի լայն հնարավորություններ, քանի որ անցել է քերականացման ավելի երկար ճանապարհ նույն աղբյուր-դաշտում առկա տաբու բառերից սերված մյուս միավորների (*damn, darn, filthy*) համեմատությամբ: Հատկանշական է նաև այն փաստը, որ այս բառը հանդիպում է հիմնականում բրիտանական անգլերենում: Այդ մասին են փաստում նաև բառի ժամանակակից բառարանային բացատրությունները:

Bloody (adjective)

informal, chiefly British

- 1 [*attributive*] used to express anger, annoyance, or shock, or simply for emphasis:

You took your bloody time.

- [*as exclamation*]: *Bloody Hell!*—*what was that?*

[*as submodifier*]: *It's bloody cold outside.* (Oxford Advanced Learner's Dictionary)

Bloody (adverb)

1. used for emphasizing that you are angry or annoyed about something

Stop being so bloody arrogant!

2. used for emphasizing something

It was a bloody good game! (Macmillan Dictionary)

Bloody (adverb)

used to emphasize an adjective, adverb, or noun in a slightly rude way:

Life would be bloody boring if nothing ever went wrong.

She's done bloody well to reach the semifinal. (Cambridge Dictionary)

Անդերսոնն ու Թրադջիլը տաբու բառերին բնութագրող երեք հիմնական առանձնահատկություն են նշում: Առաջին՝ տաբու բառը վերաբերում է ինչ-որ երևույթի, որը տվյալ մշակույթում համարվում է տաբու, այսինքն՝ արգելված: Երկրորդ՝ տաբու բառերն այլևս չեն մեկնաբանվում բառացիորեն, այլ արտահայտում են ընդհանուր բացասական հուզական վերաբերմունք: Այս երկրորդ առանձնահատկությունը կապված է երրորդի հետ՝ ըստ որի տաբու բառերը հիմնականում արտահայտում են վառ արտահայտված հույզեր ու գնահատողական վերաբերմունք /Andersson&Trudgill, 2007: 195/: Նսպյոլին ու Հոեքսեման համակարծիք են տաբու բառերի այս երրորդ առանձնահատկության հետ՝ նշելով, որ ըստ էության այս բառերն իրենց մեջ արդեն իսկ ամփոփում են աստիճանավորման նշանակություն՝ իրենց բացասական առնչանակության շնորհիվ, որը ուժգնացնող գործառույթ ունի /Napoli and Hoeksema, 2009: 626/: Ըստ նրանց՝ այդ իսկ պատճառով ամենևին զարմանալի չէ, որ որոշ տաբու բառեր վեր են ածվել աստիճանավորող մակբայների՝ ուժգնացման հստակ գործառույթով՝ մասամբ կորցնելով իրենց հիմնական նշանակության մեջ առկա բացասական իմակները: Որպես այդպիսի օրինակ նրանք նշում են *damn* բառը: Սակայն մեր կարծիքով այդքան էլ ճիշտ չէ *damn* սաստկական

բառը համարել միավոր՝ գրկված իր բացասական առնչանակությունից, քանի որ այն դեռևս ունի հստակ արտահայտված բացասական երանգավորում ու հազվադեպ է հանդիպում պաշտոնական խոսույթում: Օրինակ՝

Damned important to her, for now, or she wouldn't be in this **damn** hotel room, wearing a **damn stupid** outfit, with a **damn fat** old German at her feet. (COCA)

Այս օրինակում damn բառն ունի ակնհայտ բացասական երանգավորում՝ արտահայտելով խոսողի զայրույթն ու բացասական վերաբերմունքը ասույթում արտահայտված իրավիճակի նկատմամբ: Այս սաստկական բառի ակնհայտ բացասական առնչանակության մասին են փաստում նաև բառարանային վերլուծության արդյունքները: Այսպես՝

Damn (exclamation)

informal

- expressing anger or frustration: *Damn! I completely forgot!*

[attributive] informal

- used for emphasis, especially to express anger or frustration: *Turn that damn thing off!* *[as submodifier]: Don't be so damn silly!* (Oxford Advanced Learner's Dictionary)

Damn (adjective)

[only before noun] impolite

used for emphasizing what you are saying, especially when you are annoyed about something: *I can't open the damn window.*

a damn sight better/cheaper/worse etc (=much better, cheaper, worse, etc.)

Ներկայացված բացատրություններից ակնհայտ է դառնում, որ *damn* բառը դեռևս իր իմաստային կառուցվածքում պահպանում է իրեն հատուկ բացասական երանգավորումը, ավելին, այն ունի գործաբանական վառ արտահայտված երանգավորում՝ արտահայտվում է գլխավորապես ոչ պաշտոնական խոսքում՝ համարվում գռեհկաբանություն, հետևաբար ոչ պատշաճ ու քաղաքավարի: Օրինակ՝

“That,” said her spouse, “is a lie.” “It’s the truth,” said she. “It’s a **damn dirty rotten stinking lousy bloody low filthy** two-faced lie,” he amplified. He’s just a lovely lovely lovely guy; Truly, TRULY outstanding. Gregsypookins – five steps of ‘diminutive’ endearment. (BNC)

Այսպիսով, ամփոփելով վերը նշված դիտարկումները՝ կարող ենք նշել, որ տաբու բառերի՝ որպես սաստկական միավորների ուսումնասիրության ժամանակ հարկ է հաշվի առնել մի շարք առանձնահատկություններ: Նախ և առաջ, տվյալ լեզվով խոսող հանրության ոչ բոլոր անդամներն են գործածում տաբու բառերը որպես գնահատողականության ուժգնացման միջոց: Նման բառերի գործածությունը մեծապես կապված է արտալեզվական, մասնավորապես սոցիալական գործոններից: Այդ իսկ պատճառով Անդերսոնն ու Թրադֆիլը նշում են, որ չափազանց դժվար է համեմատել տաբու բառերի գործածության հաճախականությունը տարբեր մշակույթներում, քանի որ նույնիսկ միևնույն

մշակույթի ներսում կարելի է նկատել նման բառերի գործածության տարբեր հաճախականություններ հասարակության տարբեր շերտերում /Andersson and Trudgill, 2007: 199/: Նրանք նշում են, որ պաշտոնական խոսույթում (գրքեր, ամսագրեր, լրագրեր) նման բառերը բավականին հազվադեպ են հանդիպում /Napoli and Hoeksema, 2009: 613/: Բիբերը և մյուսները նույնպես ընդգծում են գործառական ոճերի առանձնահատկություններով պայմանավորված նման տարբերությունների կարևորությունը: Համեմատելով *damn* բառի գործածությունը գրավոր ու ոչ գրավոր աղբյուրներում, նրանք նշում են, որ այս բառը առավել հաճախ հանդիպում է խոսակցական լեզվում, մինչդեռ այն հազվադեպ է հանդիպում ակադեմիական տեքստերում /Biber et al., 2000: 56/:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ուժգնացնող բառերի զարգացման հիմքում ընկած քերականացման ու իմաստային փոխակերպումների գործընթացները պայմանավորում են նրանց իմաստային առանձնահատկությունները, գործածության հաճախականությունն ու կապակցելիության հնարավորությունները: Գնահատողական դատողություններում ուժգնացնող բառերի ընտրությունը գլխավորապես կախված է խոսողից, նրա հաղորդակցական մտադրությունից և համատեքստից, որում առկայանում են ուժգնացնող բառերի բոլոր իմաստային ու գործաբանական առանձնահատկությունները: Ուժգնացնող բառերի զարգացումն ուղեկցվում է բառի կիրառության համատեքստային ընդլայնմամբ և բուն բառային իմաստի մասնակի կորստով: Այս համատեքստում հուզասաստկական բառերը՝ որպես ուժգնացնող բառերի զարգացման հիմնական իմաստային աղբյուր-դաշտերից մեկից սերող միավորներ, ունեն վառ արտահայտված հուզագնահատողական երանգավորում և գործածվում են հիմնականում խոսակցական լեզվում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Allerton D.J. English Intensifiers and Their Idiosyncrasies // *Language Topics. Essays in Honour of M. Halliday*. Amsterdam: John Benjamins, 1987.
2. Andersson L., Trudgill P. Bad Language. London: Penguin Books, 1992.
3. Andersson L., Trudgill P. Swearing // Monaghan L. and Goodman J. (eds.) *A Cultural Approach to Interpersonal Communication*. Malden, MA: Blackwell Publishing, 2007.
4. Athanasiadou A. On the Subjectivity of Intensifiers // *Language Sciences*, v. 29. Amsterdam: Elsevier, 2007.
5. Biber D., Conrad S., Leech G. Longman Student Grammar of Spoken and Written English. Harlow: Pearson Education Limited, 2007.
6. Biber D., Johansson S., Leech G., Quirk R. Longman Grammar of Spoken and Written English. Harlow: Pearson Education, 2000.
7. Bolinger D. Degree Words. The Hague/Paris: Mouton, 1972.

8. Langacker R.W. Syntactic Reanalysis // Li C. (ed.) *Mechanisms of Syntactic Change*. Austin: University of Texas Press, 1977.
9. Lichtenberk F. On the Gradualness of Grammaticalization // Traugott E. & Heine B. (eds.) *Approaches to Grammaticalization*, (Vol.1). Focus on Theoretical Issues. Amsterdam: John Benjamins, 1991.
10. Murphy B. *Corpus and Sociolinguistics: Investigating Age and Gender in Female Talk*. Amsterdam: John Benjamins, 2010.
11. Napoli D., Hoeksema J. The Grammatical Versatility of Taboo Terms // *Studies in Language*, 33.3. Amsterdam: John Benjamins, 2009.
12. Cambridge Advanced Learner's Dictionary. Cambridge: Cambridge University Press, 2008.
13. Collins COBUILD Advanced Learner's English Dictionary. Glasgow: HarperCollins Publishers, 2003.
14. Macmillan English Dictionary for Advanced Learners. Macmillan Education Australia, 2007.
15. Oxford Advanced Learner's Dictionary. Oxford: Oxford University Press, 2000.
16. The British National Corpus (BNC) // available online at: <http://www.natcorp.ox.ac.uk/>.
17. The Corpus of Contemporary American English (COCA) // available online at: <http://corpus.byu.edu/coca/>.

Е. ЕРЗИНКЯН, Л. КАЗАРЯН – Табу как источники возникновения эмоционально-усилительных интенсификаторов. – Настоящая статья посвящена изучению семантических и функциональных особенностей табу, которые являются одним из основных источников возникновения интенсификаторов в языке. Табу как особый лексико-семантический класс слов в английском языке наиболее часто подвергаются процессам постепенной десемантизации и грамматикализации, лежащим в основе возникновения и становления эмоционально-усилительных интенсификаторов.

Ключевые слова: оценка, эмоционально-оценочное восприятие, поля-источники, табу, грамматикализация, эмоционально-усилительные слова

Y. YERZINKYAN, L. GHAZARYAN – Taboo Words as a Source Domain for the Development of Intensifiers. – The present paper discusses the semantic and functional peculiarities of taboo words serving as a source domain for the development of intensifiers. The study shows that due to their marked pragmatic power and the processes of desemanticization and grammaticalization taboo words can gradually develop into adverbial items expressing a more grammatical and pragmatic function of intensification.

Key words: evaluation, emotional-evaluative perception, intensification, taboo words, grammaticalization, intensifiers

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ
CONTENTS

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ/Лингвистика/Linguistics

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Ս., ԲԱԳՈՒՄՅԱՆ Լ. Քենեթ Գրեհեմի «Քամին ուռիների մեջ» ստեղծագործության շրջադասությունները (ինվերսիան) և դրանց հայերեն թարգմանության խնդիրը	3
ГАБРИЕЛЯН С., БАГУМЯН Л. Стилистическая инверсия в произведении Кеннета Грэма «Ветер в ивах» и проблема его перевода на армянский язык	
GABRIELYAN S., BAGUMYAN L. Stylistic inversion in Kenneth Grahame's "The Wind in the Willows" and the problem of its translation	
ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Համընդհանուր դարձվածային միավորների լեզվամշակութային, թարգմանական տարբերակները և դրանց հոգևոր իմաստները	11
ГРИГОРЯН А. Лингвокультурные, переводческие варианты универсальных фразеологических единиц и их духовные значения	
GRIGORYAN A. Linguocultural, translational options of universal phraseological units and their spiritual meanings	
ԳՐԻԳՈՐՅԱՆ Ք., ԹՈՎԱՍՍՅԱՆ Լ. Համակարգչային եզրերի համարժեքների ստեղծումը և համակարգչային եզրաբանության զուգաձևությունների վերացման եղանակները հայերենում	18
ГРИГОРЯН К., ТОВМАСЯН Л. Методы создания компьютерных терминов на армянском языке и способы исключения терминов-эквивалентов	
GRIGORYAN Ch., TOVMASYAN L. The creation of computer terms in the Armenian language and means for eliminating term variations	
ԵՐԶՆԿՅԱՆ Ե., ԳԱԶԱՐՅԱՆ Լ. Տաբու բառերը որպես հուզաստատկական բառերի առաջացման աղբյուր-դաշտ	30
ЕРЗИНКЯН Е., ГАЗАРЯН Л. Табу как источники возникновения эмоционально-усилительных интенсификаторов	
YERZINKYAN Y., GHAZARYAN L. Taboo words as a source domain for the development of intensifiers	
ԽԱՐԱԶՅԱՆ Հ. Սոցիալական գովազդը որպես հասարակական գիտակցության ձևավորման միջոց	36
ХАРАЗЯН Е. Социальная реклама как средство формирования социального сознания	
KHARAZYAN H. Public advertising as a means of developing social awareness	
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ. Ժամանակի նշույթավորումը տնտեսական իրադարձություններում	42
АРУТЮНЯН Л. Темпоральная маркированность экономических событий	
HARUTYUNYAN L. Temporal markers of economic events	
ՍԵԼԻԶ-ԱԳԱՍՅԱՆ Շ. Անգլերենում գայրույթ հույզի որոշ իմաստային յուրահատկությունների մասին	53
МЕЛИК-АДАМЯН Ш. О некоторых семантических особенностях эмоции «злость» в английском языке	

MELIK-ADAMYAN SH. Some Semantic Peculiarities of the Emotion “Anger” in English ՄԵԼԻԿ-ԱԴԱՄՅԱՆ Ս. Համատեքստը՝ որպես նույնարանական ասույթների ապա- կողմավորման միջոց	61
MECPOПЯH A. O контекстуальной обусловленности декодирования тавто- логических высказываний MESROPYAN A. Context as the key to the calculation of tautologies	
ՄՈՎՍԻՍՅԱՆ Տ. Ուղղաձիգ համատեքստը որպես լեզվարանական ուսում- նասիրության առարկա	74
МОВСИСЯН Т. Вертикальный контекст как объект лингвистического анализа MOVSISYAN T. Vertical context as a subject of linguistic study	
ГАЛУСТЯН А. Когнитивные основы развития причинного значения в семантике первообразных предлогов	80
ԳԱԼՍՏՅԱՆ Հ. Պարզ կապերի պատճառական իմաստի զարգացման ճանաչողական (կոգնիտիվ) նախադրյալները GALUSTYAN H. Cognitive aspects of developing causative meaning in simple prepositions	
ГЕВОРГЯН К. Человеческая телесность в современной лингвистике: соматизмы в языке и культуре	88
ԳԵՎՈՐԳՅԱՆ Զ. Մարդկային մարմինը ժամանակակից լեզվաբանության մեջ. սոմատիկ հասկացությունները լեզվում և մշակույթում GEVORGYAN K. Human body in modern linguistics: somatisms in language and culture	
СИМОНЯН А. Искренность в политической коммуникации через призму теории речевых актов	97
ՍԻՄՈՆՅԱՆ Ա. Անկեղծությունը քաղաքական խոսույթում SIMONYAN A. Sincerity and the speech acts used by the politicians	
ՄԵԹՈԴԻԿԱ/Методика/ Methodology	
НОВАКИМЯН L. TED Talks as a tool for enhancing listening comprehension	102
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Լ. TED դասախոսությունները որպես լսել-ընկալելու հմտու- թյունները զարգացնելու միջոց ОВАКИМЯН Л. TED лекции как средство развития навыков аудирования	
TOVMASYAN N., GHAZARYAN R. A plan of a film-based lesson for EFL students of intermediate level	112
ԹՈՎԱՍՏՅԱՆ Ն., ԳԱԶԱՐՅԱՆ Ռ. Ֆիլմ-դասի ծրագիր անգլերենը որպես օտար լեզու դասընթացի համար ТОВМАСЯН Н., КАЗАРЯН Р. К вопросу об использовании кино- и видео- материалов при обучении английского как иностранного	
ԱՄԻՐՅԱՆ Ա. Ինտերակտիվ դասերի կազմակերպումը որպես մասնագիտա- կան նյութն օտար լեզվով առավել արդյունավետ յուրացնելու միջոց	119
АМИРЯН А. Организация интерактивных занятий как способ продуктивного усвоения профессионального материала AMIRYAN A. The organization of interactive lessons as a productive means of assimilation of the professional material	

ԱՐՄԵՆՅԱՆ Լ. Իսպաներեն դարձվածքային միավորների ուսուցման ազգամշակութային հայեցակերպը լեզվական բուհում	126
АРСЕНЯН Л. Национально-культурный аспект обучения фразеологических единиц испанского языка в языковом вузе	
ARSENYAN L. National-cultural aspect of learning Spanish phraseological units in a linguistic university	
ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ Հ. Հաղորդակցական մեթոդի դերը իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդման խնդրում	136
БАГДАСАРЯН А. Роль коммуникативного метода в преподавании испанского языка как иностранного	
BAGHDASARYAN H. The role of communicative method in teaching Spanish as a foreign language	
ԲԱՐՍԵԳՅԱՆ Լ. Օտար լեզվի դասավանդման մեջ երաժշտությունն ինտեգրելու որոշ առավելությունների մասին	144
БАРСЕГЯН Л. О некоторых преимуществах интегрирования музыки в преподавании иностранного языка	
BARSEGHYAN L. On some advantages of integrating music into foreign language teaching	
ՀԱՅԹՅԱՆ Լ. Ընթերցման միջոցով տեքստը ըմբռնելու ռազմավարությունների մասին.....	151
АЙТЯН Л. О стратегиях восприятия текста при чтении	
HAITYAN L. On reading comprehension strategies	
ՆԻԿՈԳՈՍՅԱՆ Հ., ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Բ. Մշակութային իրազեկության դերը օտար լեզվի ուսուցման գործընթացում	158
НИКОГОСЯН Р., САРУХАНИЯН Б. Роль культурной грамотности в процессе преподавания иностранного языка	
NIKOGHOSYAN H., SARUKHANYAN B. The role of cultural awareness in foreign language teaching	
ՉԱԼԱԲՅԱՆ Ս., ԳԱԶԱՐՅԱՆ Լ. Ուսանողակենտրոն ուսուցման կարևորությունն օտար լեզուն հատուկ նպատակների համար դասընթացում	165
ЧАЛАБЯН С., КАЗАРЯН Л. О важности лично-ориентированного обучения иностранному языку для специальных целей	
CHALABYAN S., GHAZARYAN L. The importance of learner-centered approach to teaching foreign languages for specific purposes	
БАГДАСАРЯН М., КОЧАРЯН С. К вопросу о преподавании иностранных языков в вузовской системе Армении	170
ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ Մ., ՔՈՉԱՐՅԱՆ Ս. Հայաստանի բուհական համակարգում օտար լեզուների դասավանդման հարցի շուրջ	
BAGHDASARYAN M., KOCHARYAN S. On the issue of teaching foreign languages in higher education establishments of Armenia	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/Литературоведение/ Literary Criticism

ԱՌԱՔԵԼՅԱՆ Ա. Ֆրանց Կաֆկայի «Օրագրերի» կառուցվածքը	178
АРАКЕЛЯН А. Структура «Дневников» Фр. Кафки	
ARAKELYAN A. The structure of Franz Kafka’s “Dairies”	
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Վ. Ամերիկյան «բիթնիկական շարժման» ազդեցությունը Չ. Բուկովսկու գեղարվեստական արձակի վրա	183
ХАЧАТУРЯН В. Формирование художественного мира Чарльза Буковского и американское «битническое движение»	
KNACHATURYAN V. Development of Charles Bukowski’s literary outlook and the American “beat movement”	
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վ. Դ.Հ. Լոուրենսի՝ «արյան գիտակցության» ըմբռնումը....	189
ОГАННЕСЯН В. Восприятие «сознания крови» у Д. Г. Лоуренса	
HOVHANNISYAN V. D.H. Lawrence’s perception on “blood-consciousness”	
ՍԱԿԱՐՅԱՆ Ա. Կառլո Գոլդոնի և Հակոբ Պարոնյան («Երկու տիրոջ ծառան» նույնանուն պիեսների համեմատական վերլուծություն).....	196
МАКАРЯН А. Карло Гольдони и Акоп Паронян (сопоставительный анализ одноименных пьес под названием «Слуга двух господ»)	
MAKARYAN A. Carlo Goldoni and Hakob Paronyan (comparative analysis of the namesake plays “The Servant of Two Masters”)	
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ր. Փիլիսոփայական վեպի կառուցման սկզբունքներն ու առանձնահատկություններն ըստ Միգել դե Ունամունոյի	209
ПЕТРОСЯН Р. Принципы и особенности построения философского романа по Мигелю де Унамуну	
PETROSYAN R. The principles and features of the construction of philosophical novel according to Miguel de Unamuno	
Տեղեկություններ հեղինակների մասին	217
Сведения об авторах	
Information on the contributors	